# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-30/2017 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ (ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՊԱՐՍՊՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ (ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՓԱԿՈՑՆԵՐԻ) ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ք. Երևան <<30>> հունվարի 2017թ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ. Բաղասարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2015թ. դեկտեմբերի 21-ին կնքված ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-30 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1 տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակը և սպասարկման մակարդակները 2017թվականի համար՝ համաձայն սույն Համաձայնագրի N 3 հավելվածի:

1.4 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2017 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2. 1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2017 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 214 642 936 (երկու հարյուր տասնչորս միլիոն վեց հարյուր քառասուներկու հազար ինը հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում.

- Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1 տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների 2017 թվականի համար

ընդհանուր գինը կազմում է 122 075 461 (մեկ հարյուր քսաներկու միլիոն յոթանասունհինգ հազար չորս հարյուր վաթսունմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,

- Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների 2017 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 92 567 475 (իննսուներկու միլիոն հինգ հարյուր վաթսունյոթ հազար չորս հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1,2 և 3 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն | «ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ |
| Ք. Երևան, Նալբանդյան 28 | ք. Երևան, Երվ. Քոչարի 9, բն. 112,113 |
| Կենտրոնական Գանձապետարան | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011012136 | Հ/Հ 163[illegible] |
| ՀՎՀՀ 02565518 | ՀՎՀՀ 01569422 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |

Հավելված 1
<<31>> հունվարի 2017թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՇԻԳ-16/1-30/2017 համաձայնագրի

# Գնման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Գնումը՝ 2017թ | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| [redacted] | | | | | | |
| 1 | Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1 տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների | 11,012,936,0 | 48,739,181,0 | 43,323,717,0 | 18,999,627,0 | 122,075,461,0 |
| 2 | Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների | 23,141,869,0 | 23,141,869,0 | 23,141,869,0 | 23,141,868,0 | 92,567,475,0 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Երվ. Քոչարի 9, բն. 112,113
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007045608
ՀՎՀՀ 01567429
(ստորագրություն)

Հավելված 2
<<30>> հունվարի 2017թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՇԻԳ-16/1-30/2017 համաձայնագրի

## Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

/ՀՀ դրամ/

| Հ/Հ | Ձեռքբերվող աշխատանքի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | Ընդամենը տարի |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| [redacted] | | | | | | | | | | | | | | |
| 1 | Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1 տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների | 7,709,055,0 | 7,709,055,0 | 7,709,055,0 | 40,256,445,0 | 40,256,445,0 | 40,256,445,0 | 90,078,719,0 | 90,078,719,0 | 90,078,719,0 | 122,075,461,0 | 122,075,461,0 | 122,075,461,0 | 122,075,461,0 |
| 2 | Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքների | 15,427,913,0 | 15,427,913,0 | 15,427,913,0 | 38,569,781,0 | 38,569,781,0 | 38,569,781,0 | 61,711,650,0 | 61,711,650,0 | 61,711,650,0 | 92,567,475,0 | 92,567,475,0 | 92,567,475,0 | 92,567,475,0 |

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, [illegible] 9, բն. 112,113

Հավելված 3
<<30>> հունվարի 2017թ. կնքված

N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-30/2017
համաձայնագրի

[illegible]

2017 թ.-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհներ

| Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը | Ավտոճանապարհի տեխնիկական կարգը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/ | Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկման պահանջվող մակարդակ | Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/ | Միավորի գինը /հազ. դրամ/ | Ընդամենը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| Պահպանման ժամանակաշրջանը` ՁՄԵՌ | | | | | | | |
| Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 34,8-կմ47,3 | Միջպետական I | 12.50 | | Լավ | 12.50 | 229.406 | 2867.575 |
| Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ 47,3-կմ65,4 | Միջպետական II-IV | 18.10 | | Լավ | 18.10 | 161.935 | 2931.024 |
| Շահումյանի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 2.70 | | Միջին | 2.70 | 156.537 | 422.650 |
| Ոսկետափի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 0.85 | | Միջին | 0.85 | 156.537 | 133.056 |
| Ավշարի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 0.53 | | Միջին | 0.53 | 156.537 | 82.965 |
| Արարատի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 0.61 | | Միջին | 0.61 | 156.537 | 95.488 |
| Հ8, Երևան-Արտաշատ-Ազնավ-Մ2 կմ 28,7-կմ42,6 | Հանրապետական II-IV | 13.90 | | Լավ | 13.90 | 156.537 | 2175.864 |
| Հ-0, Մ2-Հ8-Ոսկետափ-Վեդի-Լանջար-Մ2 կմ0-կմ25 | Հանրապետական II-IV | 25.00 | | Միջին | 25.00 | 118.167 | 2954.175 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Մոտեցում Խոր Վիրապին կմ0- կմ1,7 | Հանրապետական II-IV | 1.70 | | Միջին | 1.70 | 118.167 | 200.884 |
| Հ11, Մ2- Փոքր Վեդի-Լուսառատ-Եղեգնավան-Մ2 կմ0-կմ16.1 | Հանրապետական II-IV | 16.10 | | Միջին | 16.10 | 118.167 | 1902.489 |
| **Ընդամենը** | | 91.99 | | 91.99 | | | 13766.170 |
| Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ | | | | | | | |
| Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ34,8-կմ47,3 | Միջպետական I | 12.50 | Լավ ՄԼ(I) | Միջին | 12.50 | 1512.352 | 18904.400 |
| Մ2, Երևան-Երասխ-Գորիս-Կապան-Իրանի սահման կմ47,3-կմ65,4 | Միջպետական II-IV | 18.10 | Բավարար ՄԲ(II) | Միջին | 18.10 | 1504.648 | 27234.129 |
| Շահումյանի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 2.70 | Բավարար ՄԲ(II) | Միջին | 2.70 | 1504.648 | 4062.550 |
| Ոսկետափի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 0.85 | Բավարար ՄԲ(II) | Միջին | 0.85 | 1504.648 | 1278.951 |
| Ավշարի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 0.53 | Բավարար ՄԲ(II) | Միջին | 0.53 | 1504.648 | 797.463 |
| Արարատի տրանսպորտային հանգույց | Հանրապետական I-IV | 0.61 | Բավարար ՀԲ(II) | Միջին | 0.61 | 1356.657 | 827.561 |
| Հ8, Երևան-Արտաշատ-Ազնավ-Մ2 կմ 28,7-կմ42,6 | Հանրապետական II-IV | 13.90 | Բավարար ՀԲ(II) | Միջին | 13.90 | 1356.657 | 18857.532 |
| Հ10, Հ8-Ոսկետափ-Վեդի-Լանջար-Մ2 կմ0-կմ25 | Հանրապետական II-IV | 25.00 | Լավ ՀԼ(I) | Միջին | 25.00 | 596.461 | 14911.525 |
| Հ11, Մոտեցում Խոր Վիրապին կմ0- կմ1,7 | Հանրապետական II-IV | 1.70 | Բավարար ՀԲ(II) | Միջին | 1.70 | 1356.657 | 2306.317 |
| Հ-11, Մ2- Փոքր Վեդի-Լուսառատ-Եղեգնավան-Մ2 կմ0-կմ16.1 | Հանրապետական II-IV | 16.10 | Բավարար ՀԲ(II) | Միջին | 14.10 | 1356.657 | 19128.864 |
| **Ընդամենը** | | 91.99 | | 89.99 | | | 108309.291 |
| **Ընդամենը Արարատ 1-ի տարածաշրջանով** | | | | | | | 122075.461 |

## Արարատի Մարզ

2017 թ.-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը պահպանման ենթակա արգելափակոցներ

| Աշխատանքի անվանումը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը գծ.մ | արգելափակոցի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկվող հատվածի երկարությունը գծ.մ | Միավորի գինը /հազ. դրամ/ | Ընդամենը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Մասիս | 30,117 | | | 1.365 | 41109.705 |
| Արտաշատ | 24,395 | | | 1.365 | 33299.175 |
| Արարատ | 13,303 | | | 1.365 | 18158.595 |
| ԸՆԴԱՄԵՆԸ Արարատի Մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության պետական ա/ճ-երի վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող պարսպող հարմարանքների պահպանում | 67815 | Լավ | | | 92567.475 |
| Ընդամենը | | | | | 92567.475 |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
Ք. Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական Գանձապետարան
Հ/Հ 900011012136
ՀՎՀՀ 02565518

---------------------------
(ստորագրություն)

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Երվ. Քոչարի 9, բն. 112,113
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163[illegible]45608
ՀՎՀՀ 01[illegible]

---------------------------
(ստորագրություն)

*Հավելված 10*

<<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ—15/1-ՏԾԻԳ-16/1-30/2017>> ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի

ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան <<30>> հունվարի 2017 թ.

<<ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Մ.Բաղդասարյանի <<AH 0671988 008-ի կողմից տրված 24.09.2008 թվականին>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է <Տրանսպորտի,կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն>> ՊԿՀ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 1 տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ընդհանուր օգտագործման (միջպետական և հանրապետական) նշանակության պարսպող համակարգերի (մետաղական արգելափակոցների) պահպանման աշխատանքներ իձեռքբերման <<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ—15/1-ՏԾԻԳ-16/1-30/2017>> ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո)

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

Ընկերության անվանումը՝ <<ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ
Հասցեն՝ք.Երևան, Երվ. Քոչարի 9
Սպասարկող բանկի անվանումը,<<Հայէկոնոմբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 163007045608
ՀՎՀՀ 01567429
տնօրեն՝ Մ. Բաղդասարյան
(ստորագրություն)
գլխ. հաշվապահ
(ստորագրություն)

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N**

*(պայմանագրի կատարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" 2017__թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող՝ <<ՏԵՐ-ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝<<Հայէկոնոմբանկ>> ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 163007045608

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 001567429

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ ՀՀ տրանսպորտի,կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն

9. Շահառուի ՀՎՀՀ՝02565518

10.Շահառուի բանկը՝Կենտրոնական գանձապետարան

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/

12.Գումարը թվերով և բառերով ՝21 464 293 ՀՀ դրամ /քսանմեկ միլիոն չորս հարյուր վաթսունչորսւ հազար երկու հարյուր իննսուներեք ՀՀ դրամ/

13.Արժույթը (բառերով և կոդով)՝

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝

15.Պայմանագրի ծածկագիրը՝ <<ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ---15/1-ՏԾԻԳ-16/1-30/2017>>

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները<br>/________________/<br>/________________/<br>19.բ.<br>Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>18.բ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /________________/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" ___ 20___ թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա. /________________/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*